ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հունվարի 25- ից 26-ը Վրաստան (Թբիլիսի) գործուղման արդյունքների մասին

1. **<u>Անունը, ազգանունը</u>**

Հակոբ Վարդանյան

2. **<u>Զբաղեցրած պաշտոնը</u>**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **<u>Գործուղման վայրը և ժամկետները</u>**

Վրաստան, ք.Թբիլիսի

4. **<u>Հրավիրող կողմը</u>**

Վրաստան

5. **<u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)</u>**

Նպատակն է եղել մասնակցել Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական փորձագիտական հանձնաժողովի նիստին:

6. **<u>Քննարկված թեմաները</u>**

Հանդիպման ընթացքում քննարկվել են՝ էներգետիկայի բնագավառում երկկողմ և տարածաշրջանային համագործակցության զարգացման, Հայաստան-Վրաստան և Հայաստան-Իրան 400 կՎ էլեկտրահաղորդման գծերի կառուցման ծրագրերը. հայկական կողմը վերահաստատել է իր հետաքրքրությունը՝ Վրաստան - Ռումինիա Անդրսևծովյան էլեկտրական մալուխի կառուցման ծրագրին միանալու հարցում:

7. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը</u>**

Հանդիպումներ են տեղի ունեցել Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարի տեղակալների՝ Ռոմեո Միկաուտաձե, Գենադի Արվելաձեի հետ:

Ռոմեո Միկաուտաձեի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են՝ Հայաստան – Վրաստան գազատարի Կարմիր կամրջի հատվածի հանգույցում Վրաստանի կողմից կատարվող աշխատանքների շարունակականության ապահովման հարցերը,որը անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետություն գազի անխափան մատակարարման համար:

Գենադի Արվելաձեի հետ քննարկվել են միջկառավարական նիստի արձանագրության հետ կապված հարցեր:

8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</u>

Պայմանավորվածություն է ձեռք բերվել հուլիս ամսին՝ Վրաստանի շուկայի նոր մոդելի անցումից հետո, ստորագրել Հայաստանի և Վրաստանի միջև էլեկտրաէներգիայի կոմերցիոն առևտրի ժամանակ պայմանագրային քանակներից շեղումների կարգավորման վերաբերյալ պայմանագիր:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>

Ակնկալվում է Հայաստան-Վրաստան էլեկտրական էներգիայի արտահանման կամ ներկրման գործարքների դեպքում էլեկտրական էներգիայի մատակարարումների շեղումների կարգավորման մասին պայմանագրի նախագծի վերաբերյալ երկկողմ և շարունակական աշխատանքների իրականացում:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

30.01.2024